

ՆԱՄԱԿՆԵՐ, ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ — ПИСЬМА, ЗАМЕТКИ —

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱԳՐԵԵՋԱՆԵՐԵՆ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՏԱՂԸ

Սայաթ-նովայի աղբյուրներն տաղերի գրավոր հիմնական աղբյուրներից առաջինը հեղինակի ինքնագիր համարվող մատյանն է, որն այժմ գտնվում է Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանում, իսկ երկրորդ հեղինակի որդի Օհանի մատյանն է, որը պահպանվում է Լենինգրադում՝ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի բաժանմունքում: Այս երկու մատյաններում, Սայաթ-նովայի հա երեքն և վրացերեն տաղերի հետ միասին, ամփոփված են նաև նրա աղբյուրները՝ տաղերը, որոնց թիվը 123 է (ներառյալ 5 տաղեր, որոնց լեզուն աղբյուրների հետ խառն է հայերենով, պարսկերենով և վրացերենով):

Բանասիրության մեջ երկար ժամանակ այս մատյանների մասին էր միայն հիշատակվում, երբ խոսք էր լինում Սայաթ-նովայի թուրքերեն կամ աղբյուրներն տաղերի մասին: Սակայն 1908 թ. բանահավաք Գ. Թարվերդ անը Քիֆլիսում գրի է առնում սայաթնովյան 21 անհայտ երգեր. որոնցից 7-ը՝ հայերեն, իսկ 14-ը՝ աղբյուրներն է Գ. Թարվերդյանի գրի առած աղբյուրներն այդ երգերը մինչև այժմ չեն հրատարակվել: Նա 1938 թ. հրատարակութան հանձնելով 7 հայերեն երգերը¹, աղբյուրներն երգերի մասին ասում է, որ գրանցեց 3-ը գրի է առել հավաքարցի պառավ Աննա Մուրադյանից, իսկ 11-ը՝ ծերունի Աղալո Գևորգյանին պատկանող մի հին ձեռագրից²:

Դժբախտաբար Գ. Թարվերդյանը չի նշանակել աղբյուրներն այդ տաղերի սկզբնատողերը, որոնցով դրանք կարող էին ճանաչելի դառնալ: Սակայն բանասեր Մ. Ս. Հասրաթյանի արխիվում այժմ կան Գ. Թարվերդյանի ձեռքով գրի առնված 11 տաղեր, իսկ ուրիշ 3 տաղեր մենք գտանք Թարվերդյանի ձեռքով գրված մի տետրակում, որը պահպանվում է Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանում³: Ընդհանրապես կարելի է հավանական համարել, որ եթե դրանցից առաջինները Աղալո Գևորգյանի ձեռագրից արտագրվածները լինեն, ապա երկրորդները կլինեն Աննա Մուրադյանից գրի առնվածները:

Գ. Թարվերդյանի տետրակում Սայաթ-նովայի անունը կրող այդ հայատառ աղբյուրներն երեք տաղերը ունեն հետևյալ սկզբնատողերը.

1. Փիւ ուստազըր բաշրմրգա դուլանըր, 3 տուն (էջ 48ա).
2. Դիլի յալան գոյլի խայիս յագա բուրում գալմալի, 5 տուն (էջ 48բ).
3. Գեջա-գյունդուզ դու փաբա աղ էյլաբամ, 3 տուն (էջ 49ա):

Այս 3 տաղերից առաջինը («Փիւ ուստազըր»), որ բառացի նույնն է Մ. Ս. Հասրաթյանի արխիվում գտնվող 11 տաղերից մեկի հետ, ինքնուրույն բնագիր չէ. նրա I և III տները փոխառություններ են Սայաթ-նովայի մատյանում գտնվող «Փիւ դադալար» (վրացատառ) և «Դողրուգուրքի» (հայատառ) տաղերից⁴, իսկ երկրորդ տաղը («Դիլի յալան») արդեն կա

1 Գ. Թարվերդյան, Սայաթ-նովայի անտիպ երգերից, Տեղեկագիր ՀԽՍՀ Պատմության և գրականության ինստիտուտի, գիրք Ա, Երևան, 1938, էջ 246—250:

2 Նույն տեղում, էջ 246:

3 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան, գրական բաժին, ֆոնդ 196, № 56:

4 Հմմտ. Սայաթ-նովա, Խաղեր (նմանահանություն), Երևան, 1953, էջ 26 և 72:

Սայաթ-Նովա ի մատյանում⁵ Այս հաշվով՝ որպես նոր մնում է միայն երրորդը (սԳեջա-գյուն-դուգ), որ հրատարակում ենք ստորև առաջին անգամ՝ թե՛ հայատառ բնագրով, ինչպես գրի է առել Դ. Թարվերգյանը, և թե՛ վերածելով ուսուստառ աղբրեղաներին:

Գ. Թարվերգյանի ավանդած հայատառ բնագրում երկու բառեր, որոնք բացահայտորեն աղավաղված էին, ընկ. Ս. Ս. Հասրաթյանի թելադրանքով սրբագրել և ուղղել ենք, իսկ աղավաղված ձևերը նշել ենք տողատակում: Բնագրի տակ տվել ենք նաև նրա հայերեն տողացի աղատ թարգմանությունը:

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ԳԵՋԱ-ԳՅՈՒՆԳՈՒՉ

КЕЧ) — КУНДУЗ

Գեջա-գյունդուղ դու փառա դադ* էլլաբամ,
Հառ գյուրսնլառ դիյառ,—բու սա՛ գայիլ դրո.
Օգի բիլմիսնլառ դլառ ամանի.
Հեշ դեմազլառ՝ բիռ գյոզսլա մայիլ դրո:

Кечә-кундуз ду парә дад еҗләрәм,
Һәр к рәнләр диҗәр,— бу нә зилдир;
Өзү билми әнләр гылар ам ны,
Һеч дем:зләр бир к зәлә мандир.

Գուշտրմ ալադրնս—վե՛րմադի դաման,
Գ՛ղում՝ մուրվար էյլա, ամանդր—աման,
Գյալդի թաս սլմադա բիռ հուրի դլման,
Ղալարի Զարբայիլ. գ ոզ Միֆայիլ դրո:

Душдум аҗагына — вермәди ламан,
Дедим, мурвәг еҗлә, әмәндыр, әмән;
Кәлди чан алмага бир һүри гылман,
Ғашлары Чәбраһил, к з Микаһылдыр.

Բազլառն մուշտադի մանամ բել ջիվան,
Ղասարմա գիւրփարո յադի բեիմաս**,
Գ՛ղում՝ Սս:յար-նովա դուլըսդրո աման,
Ուզըն դոնդառ, հառ նա՛ դեսան դայիլ դրո:

Бәҗларын муштәги мәнәм, бей чивән,
Ғәслимә кир бдир јагы белман,
Дедим.— Саҗар-Нови гулунд р, әмән,
Узун д ндәр, һәр нә десән гаилдир.

ԳԻՇԵՐ-ՑԵՐԵԿ

Գիշեր-ցերեկ հառաչում եմ սրտակտոր,
Ամեն տեսնող կասի. ի նշ թշվառ է սա.
Զիմաշողներն ափսոսանք կտան ինձ,
Չեն ասի, քե տարված է մի ղեղանիով:

Ընկա նրա ոտքերը, բայց նա չուզեց ինձ լսել.
Ասացի. խղճա ինձ, ափսոս եմ, շատ ափսոս.
Իկավ հոգիս առնելու մի պատանի հեռչտակ,
Հոնքերով նա Գարբիլյն է, իսկ աչքերով՝
Միֆայել:

Այդիների երիտասարդ սիրահարը ե՛ս եմ, ե՛ս,
Հ՛տապեղում է ինձ այդ անաստվածն անօրեն.
Ես ասացի. Սայաթ-Նովան բո ստրուկն է, ո՛վ
անսիրտ,
Մի նայիւ, տե՛ս, ինչ էլ ասես՝ հավան է նա:

⁵ Նույն տեղում, էջ 7:

* Զեռագրում՝ առ:

** Զեռագրում՝ բեիզվան: